ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ИЗВЕСТИЯ

НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ И

НАЦИОНАЛЬНОГО ПОЛИТЕХНИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐԻԱ

СЕРИЯ ТЕХНИЧЕСКИХ НАУК

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН

Журнал издается с 5.01.1948 г.
Выходит 4 раза в год

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Ռ.Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ **(գլխավոր խմբագիր),** Հ.Ա. ԹԵՐԶՅԱՆ **(գլխ. խմբ. տեղակալ),**
Զ.Կ. ՍՏԵՓԱՆՅԱՆ **(պատասխանատու քարտուղար),** Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ,
Ռ.Վ. ԱԹՈՅԱՆ, Վ.Վ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ, Ժ.Դ.ԴԱՎԻԴՅԱՆ, Ս.Պ. ԴԱՎԹՅԱՆ,
Ս.Մ. ՂԱԶԱՐՅԱՆ, Ռ.Զ. ՄԱՐՈՒԽՅԱՆ, ՅՈՒ.Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Վ.Ս. ՍԱՐԳՍՅԱՆ,
Ս.Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ.Գ. ՍՏԱԿՅԱՆ

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Р.М. МАРТИРОСЯН**(главный редактор),** А.А. ТЕРЗЯН **(зам. глав.редактора),**
З.К. СТЕПАНЯН**(ответственный секретарь),** С.Г. АГБАЛЯН**,**
Р.В. АТОЯН, В.В. БУНИАТЯН, Ж.Д. ДАВИДЯН, С.П. ДАВТЯН, С.М. КАЗАРЯН,
В.З. МАРУХЯН, Ю.Л. САРКИСЯН, В.С. САРКИСЯН,
С.О. СИМОНЯН, М.Г. СТАКЯН

EDITORIAL BOARD

R.M. MARTIROSSYAN**(Editor-in-Chief),** H.A. TERZYAN**(Vice-Editor-in-Chief),**
Z.K. STEPANYAN**(Secretary - in - Chief),**S.G. AGHBALYAN,
R.V. ATOYAN, V.V. BUNIATYAN, Zh.D. DAVIDYAN, S.P. DAVTYAN,
S.M. GHAZARYAN, V.Z. MARUKHYAN, YU.L. SARGSYAN, V.S. SARKISSYAN,
S.H. SIMONYAN, M.G. STAKYAN

Հրատ. խմբագիր՝ **ԺԱՆՆԱ ՍԵՅՐԱՆՅԱՆ**

Խմբագիրներ՝ **ՀԱՍՄԻԿ Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ՀԱՍՄԻԿ Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

© Издательство ГИУА

ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2012. Т. LXV, № 4.

ՀՏԴ 621.762:621.763 ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս.Գ. ԱՂԲԱԼՅԱՆ, Գ.Ա. ՎԱՍԻԼՅԱՆ, Ա.Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՐԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալիր հետազոտությունների արդյունքում բացահայտվել են մետաղական թելքերով ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական առանձնահատկությունները, այդ թվում՝ ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի ձգման ամրության կախվածությունը մետաղաթելի ծավալային չափերից, երկարությունից, առանցքի նկատմամբ կողմնորոշվածությունից և այլն: Ցույց է տրված, որ մետաղները դիսկրետմետաղաթելերով ամրանավորելու ուղեքում մետաղաթելի կոմնորոշվածությունը և կրիտիկական երկարությունն ունեն կարևոր նշանակություն կոմպոզիցիոն նյութի հատկությունների ձևավորման գործընթացում:

Առանցքային բառեր. կոմպոզիցիոննյութ, փոշեմետալուրգիա, թելք, մայրակ, դեֆորմացում, տաքարտամղում, ձգում, սեղմում, անիզոտրոպիա:

Հայաստանի Հանրապետության սոցիալական և տնտեսականզ արգացման ծրագրերում մեծ տեղ է հատկացված մետալուրգիային, առանց որի անհնար է պատկերացնել մեքենաշինության, սարքաշինության, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, ռադիոտեխնիկայի, ինչպես նաև ռազմական արդյունաբերության հետագա առաջընթացը: Ընդորում, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, ավելի մեծ տեղ է հատկացվում կոմպոզիցիոն և հատկապես բարձր ամուրնյութերին: Այստեսակետից կարևորություն են ներկայացնում մետաղական հիմքով կոմպոզիցիոն նյութերը (ԿՆ), որոնք ամրանավորված են բարձր ամրությամբ մետաղաթելերով:

Կոմպոզիցիոն նյութերի ստացման տեխնոլոգիական բարդությունը պայմանավորված է երեքտիպի հիմնախնդիրներով:

Հիմնախնդիրների առաջինխումբն առնչվում է մետաղաթելի և մայրակի նյութերի փոխկապակցությանը: Այս հիմնախնդիրների ճիշտ լուծումից է կախված մետաղաթելի և մայրակի միջև կապի ամրությունը, ինչպես նաև ֆիզիկաքիմիական փոխակերպությունների ոչ ցանկալի ընթացքը սահմանային շերտում: Հիմնախնդիրների երկրորդ խումբը կապված է մայրակում մետաղաթելի հավասարաչափ բաշխվածության հետ, իսկ երրորդը տեխնոլոգիական է և առնչվում է նախապատրաստվածքի ու արտադրատեսակների ստացմանը:

Այս խնդիրների լուծման տեսակետից լայն հնարավորություններ ունի փոշեմետալուրգիան՝ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի ստացման հեռանկարային մեթոդներից մեկը: Այսպիսի նյութերը պետք է ունենան անծակոտկեն կառուցվածք,

ինչը գործնականորեն հնարավոր է ապահովել միայն տաք արտամղման (էքստրուզիայի) միջոցով:

Սակայն մինչև այժմ լիովին ուսումնասիրված չեն ամրանավորված բարձրամուր կոմպոզիցիոն նյութերի՝ տաք արտամղմամբ ստացման գործընթացի տեսական և տեխնոլոգիական առանձնահատկությունները: Այս հարցերի պարզաբանումը կնպաստի փոշեմետալուրգիայի եղանակով վերը նշվածն յութերի արտադրության կտրուկ բարձրացմանը: Փոշեմետալուրգիական եղանակով ստացվող նյութերի արտադրությունը խիստհեռանկարային էՀայաստանիՀանրապետությանհամար, որով էլ պայմանավորված է սույն աշխատանքի արդիականությունը: Առաջարկվող տեխնոլոգիան շահավետ է նտարբերվում է ավանդական եղանակներից:

Աշխատանքի նպատակն է բացահայտել պահանջվող համալիր հատկություններով օժտված բարձրամուր ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի՝ փոշեմետալուրգիական եղանակով ստացման տեսական և տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Կոմպոզիցիոն նյութերն անիզոտրոպ են, և անիզոտրոպության աստիճանն առաջին հերթին կախված է մետաղաթելերի կողմնորոշվածությունից: Ամենաբարձր մեխանիկական հատկություններ ստացվում են այն ժամանակ, երբ նյութում բոլոր մետաղաթելերը զուգահեռ են մեկը մյուսին և կողմնորոշված են լարման ուղղությամբ, ինչպես նաև մայրակի նյութի հարաբերական երկարացումը՝ որպես նվազագույն պահանջ, պետք է հավասար լինի մետաղաթելի հարաբերական երկարացմանը՝ համակարգի միատարությունն ապահովելու համար:

Կոմպոզիցիոն նյութերի հիմնական հատկությունները գլխավորապես կախված են մետաղաթելի հատկություններից և բաժանման սահմանում մետաղաթել-մայրակ կապիուժից: Ամրանավորման համար օգտագործվող մետաղաթելերը պետք է ունենան հետևյալ հատկությունները՝ հալման բարձր ջերմաստիճան, փոքր տեսակարար կշիռ, բարձր ամրություն աշխատանքային ջերմաստիճանի բոլոր տիրույթներում, ամենափոքր լուծվելիություն մայրակում, քիմիական բավականաչափ կայունություն, աշխատանքային ջերմաստիճաններում ֆազային փոխակերպությունների բացակայություն և այլն:

Նյութերի ամրանավորումը կատարվում է 3 ձևով՝ թելիկային բյուրեղներով, մետաղալարերով և ոչ մետաղական կիսաբյուրեղային մետաղաթելերով: Աղ. 1-ում բերված են ամրանավորող մի քանի մետաղաթելերի հատկությունները, որոնցից ամենաբարձր ամրությունն ունեն կերամիկական թելքերը: Աշխատանքի ընթացքում մետաղաթելերը պետք է իրենց վրա կրեն հիմնական (ձգման, սեղմման, ծռման և այլն) լարումները, հակառակ դեպքում՝ հատկությունները կլինեն շատ ցածր:

Աղյուսակ 1

Ամրանավորողմետաղաթելերիֆիզիկա-մեխանիկականհատկությունները

Մետա–դաթելի տեսակը	Մետա-դաթելի նյութը	Հալմանջերմաս-տիճանը, ^{0}C	Խտու-թյունը, x10^3, *կգ/մ^3*	Ջերմայինընդար–ձակմանգործակիցը, $\alpha \times 10^6$, *աստ$^{-1}$*	Ամրու-թյանսահմանը, *ՄՊա*	Առաձ-գակա-նության մոդուլը, *ԳՊա*
Մետա-դական	W	3400	19,30	7,76	405	4150
	Mo	2620	10,22	6,90	225…290	3650
	Be	1280	1,82	13,0…18,0	130…180	2460
	Ածխած–նայինպողպատ	1535	7,80	13,0…14,3	430	2100
	Չժան–գոտվողպողպատ	-	7,80	-	350	2100
	Rene-41	1350	8,25	-	-	1690
Մետա–դաթելեր	Cu	1083	8,9	17	334	1260
	Fe	1535	7,85	-	330	2100
	Ni	1450	8,95	-	394	2180
Կերամի-կականթելեր	Al_2O_3	2040	3,95	-	2100	4350
	SiC	2700	3,20	-	2100	4900
	գրաֆիտ	3700	2,10	-	2100	10000

Եթե մայրակը և մետաղաթելը ենթարկվում են միաժամանակյա դեֆորմացման, ապա մետաղաթելի դեֆորմացման կապը մայրակի դեֆորմացման հետ արտահայտվում է հետևյալ կախվածությամբ [1].

$$\varepsilon_{ym} = \varepsilon_{yp}\left[\frac{2V_p}{V_p + 0{,}8}\left(\frac{E_m}{E_p} - 1\right) + 1\right]^{-1}, \qquad (1)$$

որտեղ ε_{ym}-ն, ε_{yp}-ն մայրակի և մետաղաթելի հարաբերական դեֆորմացումներն են ձգման ժամանակ իրենց առանցքի ուղղությամբ, V_p-ն՝ ամրանավորող մետաղաթելի ծավալը, իսկ E_m-ն, E_p-ն՝ Յունգի մոդուլները մայրակի և մետաղաթելի համար: Երբ $V_p \geq 1$, ապա դեֆորմացումը պետք է մեծացնի կոմպոզիցիոն նյութի ընդհանուր դեֆորմացումը $E_p \geq E_m$ անգամ: Մետաղների համար այդ հարաբերությունը փոփոխվում

է 1-ից մինչև 10-ը ընկած տիրույթում [1]: Մեծացնելով մետաղաթելի $V_թ$, կարելի է ստանալ կոմպոզիցիոն նյութի ամենաբարձր ամրությունը: Բայց ինչպես ցույց է տալիս (1) բանաձևը, եթե մայրակի հարաբերական երկարացումը սահմանափակ է, այդ դեպքում մեծ $V_թ$ արժեքը կարող է խախտել համակարգի միատարրությունը: Դրա համար նյութի օպտիմալ բաղադրությունն ընտրելիս պետք է հաշվի առնել մետաղաթելի ծավալային բաղադրության սահմանափակման հետևանքով կոմպոզիցիոն նյութի ամրության նվազումը: Ամրության նվազումը կարող է տեղի ունենալ նաև մետաղաթելերի ոչ հավասարաչափ բաշխվածության պատճառով, այսինքն՝ եթե կպած են մեկը մյուսին:

Վերը նշվածը կարելի է կանխել միայն այն դեպքում, երբ մետաղաթելերի միջև եղած δ հեռավորությունը, խզման ընթացքում մետաղաթելի $d_թ$ տրամագիծը, $ε_թ$ հարաբերական երկարացումը և մայրակի $ε_մ$-ն ունենան հետևյալ կախվածությունը [2]՝

$$\sigma \geq d_{թ} / \frac{\varepsilon_{մ}}{\varepsilon_{թ}} - 1 : \tag{2}$$

Կոմպոզիցիոն նյութի ամրության սահմանը որոշվում է

$$\left(\sigma_{ժ}\right)_{կմ} = \left(\sigma_{ժ}\right)_{թ} V_{թ} + \sigma_{մ}\left(1 - V_{թ}\right) \tag{3}$$

կախվածությամբ, որտեղ $(σ_ժ)_թ$-նամրությանսահմանն էմետաղաթելիձգմանժամանակ, իսկ $σ_մ$–ը՝ մայրակիամրությունը թելիկի խզմանպահին: Եթե մետաղաթելի պլաստիկությունը փոքր է, իսկ առաձգականությունը՝ մեծ, քան մայրակինը, ապա ամրանավորված նյութի ձգման կորը բաժանվում է 3 տիրույթի՝

1. մայրակը և մետաղաթելը դեֆորմացվում են առաձգականորեն,
2. մայրակն անցնում է պլաստիկ-առաձգական վիճակի,
3. համակարգի 2 կոմպոնենտներն էլ գտնվում են պլաստիկ դեֆորմացման վիճակում:

Կոմպոզիցիոն նյութերի ամրության կախվածությունը մետաղաթելի ծավալային բաղադրությունից ցույց է տրված նկ. 1-ում:

Մետաղաթելի կրիտիկական ծավալային չափը ($V_{կր}$) կարելի է որոշել ամրանավորված նյութերի ամրության սահմանի հավասարության պայմանից, հաշվի առնելով բաղադրության մեջ նրա ծավալային մասը, երբ $V_մ = V_{կր}$՝

$$\left(\sigma_{ժ}\right)_{թ} V_{կր} + \sigma_{մ}\left(1 - V_{կր}\right) = \left(\sigma_{ժ}\right)_{մ}\left(1 - V_{կր}\right), \tag{4}$$

որտեղ $(σ_ժ)_թ$–ը թելքի ամրության սահմանն է նյութի ձգման ընթացքում: Լուծելով (4) հավասարումը, ստանում ենք՝

$$V_{կր} = \frac{\left(\sigma_{ժ}\right)_{մ} - \sigma_{մ}}{\left(\sigma_{ժ}\right)_{թ} + \left(\sigma_{ժ}\right)_{մ} - \sigma_{մ}} : \tag{5}$$



Նկ. 1. Զուգահեռ մետաղաթելերով ամրանավորված կոմպոզիցիոն նյութի ձգման ամրության կախվածությունը մետաղաթելի ծավալային չափից [1]

Եթե $V_թ = V_{կր}$, ապա կոմպոզիցիոն նյութն ունի ամենափոքր ամրությունը: Եթե մետաղաթելի ծավալային պարունակությունը հավասար է V_0-ի, ապա այդ դեպքում ամրանավորված կոմպոզիցիոն նյութի ամրության սահմանը հասնում է ոչ ամրանավորված մայրակի ամրության սահմանին՝

$$(\sigma_ժ)_թ V_0 + \sigma_մ(1 - V_0) = (\sigma_ժ)_մ, \qquad (6)$$

որտեղ V_0-ն մետաղաթելի ծավալն է, որի դեպքում կոմպոզիցիոն նյութի ամրության սահմանը հավասար է մաքուր մայրակի ամրության սահմանին: (6)-ից ստանում ենք՝

$$V_0 = \frac{(\sigma_ժ)_մ - \sigma_մ}{(\sigma_ժ)_թ - \sigma_մ}: \qquad (7)$$

Ավելի բարձր ամրանավորում ստանալու համար, որքան կարելի է, պետք է փոքր վերցնել $V_{կր}$-ը և V_0-ն: Այս դեպքում կարելի է հասնել մետաղաթելի իրականամրությանը, ընդ որում՝ նրա ոչ մեծ ծավալային չափի դեպքում: [3] աշխատանքում ցույց է տրված, որ0,5 *մմ* տրամագծով վոլֆրամի լարերով պղնձի անընդմեջ ամրանավորման դեպքում $V_{կր}$-ը ստացվում է՝ $V_{կր}$=8,5 *ծավ.%,* չժանգոտվող պողպատի լարերի դեպքում՝ $V_{կր}$=17,0 *ծավ.%*:

$V_{կր}$-ի և V_0-ի փոքրացման համար անհրաժեշտ է մայրակն ամրանավորել բարձրամրության սահման ունեցող մետաղաթելերով:

Եթե նյութն ամրանավորված է դիսկրետ մետաղաթելով, ապա այդ դեպքում մետաղաթելի ամրության լիարժեք օգտագործումը կոմպոզիցիոն նյութում դժվարա-

նում է: Թելիկների վրա առաջանում է անհավասարաչափ լարվածություն: Ծայրերում այն հավասար է 0-ի, իսկ մեջտեղում՝ առավելագույնի: Սա պայմանավորված է նրանով, որ բեռնվածությունը փոքրանում է մետաղաթելի վրա ազդողշոշափող լարման ուղղությամբ՝ մայրակի և մետաղաթելի բաժանման մակերևույթի սահմանում: Դրա համար մետաղաթելը պետք է ամուր կապված լինի մայրակի հետ [4]: $d_թ$ տրամագծով գլանաձև մետաղաթելի ծայրից X հեռավորության վրա σ_x ձգմանն τ շոշոփող լարմների միջև գործում է հետևյալ կապը [5]՝

$$\sigma_x \frac{\pi d_թ^2}{4} = \tau \pi d_թ x : \qquad (8)$$

Եթե հաշվենք, որ σ=const, ապա ստացվում է գծային կախվածություն՝

$$\sigma_x = \frac{4\tau x}{d_թ} : \qquad (9)$$

Մետաղաթելում ձգման լարումը հասնում է մեծագույն արժեքի մետաղաթելի ծայրից x_0 հեռավորության վրա, որից հետո այն դառնում է հաստատուն: Մետաղաթելի դեֆորմացումը σ_{x0}- ի ամենամեծ արժեքի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով [6]՝

$$\varepsilon = \frac{\sigma_{x0}}{qE}, \qquad (10)$$

որտեղ q-ն ուղղիչ գործակիցն է Յունգի E մոդուլի հնարավոր փոփոխության և մեծ դեֆորմացման դեպքում: Մետաղաթելի ծայրից x_0–ից մեծ հեռավորության դեպքում մայրակի և մետաղաթելի միջև հարաբերական սահք գոյություն չունի: (9) և (10) հավասարումներից հետևում է, որ

$$x_0 = \frac{\sigma_{x0} d_թ}{4\sigma} : \qquad (11)$$

Ընդ որում՝ $\sigma_{x0} = \sigma_թ$դեպքում ստացվում է մետաղաթելի կրիտիկական երկարությունը՝

$$L = \frac{d_թ \sigma_թ}{2\tau} = 2x_0 : \qquad (12)$$

Եթե մետաղաթելի երկարությունը փոքր է կրիտիկականից, ապա նյութը կարող է քայքայվել մայրակի միջով, թելիկների դուրսհանման հետևանքով:

Կրեկը և Բրաուտմանն առաջարկել են մետաղաթելի կրիտիկական երկարության համար ընդունել այնպիսի պայմանական երկարություն, որի դեպքում մետա-

դաթելը կարողանա կրել 97% լարվածություն: Մետաղաթելի տարբեր երկարությունների դեպքում ձգման լարվածության էպյուրը բերված է նկ. 2-ում [4]: Ինչպես երևում է նկարից, մետաղաթելի երկարությունը մեծացնելիս ձգող լարումները մետաղաթելի մեջտեղում մեծանում են, և երբ $\ell=\ell_{\text{կր}}$, ապա այն հասնում է մեծագույն արժեքի՝ հավասարվելով $(\sigma)_{\text{թ}}\max$: $\ell_{\text{կր}}<\ell$ դեպքում մետաղաթելի ամենամեծ ամրությունը մեջտեղում մնում է անփոփոխ, բայց մեծանում է այն տեղամասը, որտեղ ազդումեն այդ լարումները:



Նկ.2. Կոմպոզիցիոն նյութի ձգման ժամանակ միջին լարվածության բաշխվածությունը՝ կախված մետաղաթելի երկարությունից [8]

Փորձնական հետազոտության արդյունքում, ինչպես նաև աշխատանք [7]-ում նշվում է, որ $\ell/\ell_{\text{կր}}=10$ դեպքում կոմպոզիցիոն նյութերի ամրությունը կազմում է անընդմեջ ամրանավորող մետաղաթելերով ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի ամրության 95%-ը: Դիսկրետ և$\ell/\ell_{\text{կր}}$ մետաղաթելով ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի ամրության գնահատման համար օգտագործվում է արտահայտություն, որը հաշվի է առնում մետաղաթելի ծավալային կոնցենտրացիայի և նրա երկարության [1, 8] միաժամանակյա ազդեցությունը, համաձայն որի.

$$(\sigma_{\text{ժ}})_{\text{կ}} = (\sigma_{\text{ժ}})_{\text{թ}} V_{\text{թ}} \left[1 - (1-\beta)\frac{\ell_{\text{կր}}}{\ell} \right] + \sigma_{\text{մ}}(1 - V_{\text{թ}}), \text{ երբ } 1 \ge V_{\text{թ}} \ge V_{\text{կր}}, \qquad (13)$$

$$(\sigma_{\text{ժ}})_{\text{կ}} = (\sigma_{\text{ժ}})_{\text{մ}}(1 - V_{\text{թ}}) + \frac{\ell_{\text{կր}}}{\ell}\beta V_{\text{թ}}(\sigma_{\text{ժ}})_{\text{թ}}, \text{ երբ } 0 \le V_{\text{թ}} \le V_{\text{կր}}, \qquad (14)$$

որտեղ β–ն մեկից փոքր գործակից է, իսկ ℓ-ը՝ մետաղաթելի երկարությունը: Իդեալական պլաստիկ մայրակի դեպքում, երբ շոշափող լարումները հավասար են հոսունության սահմանին, β=0,5 [9]: Այս դեպքում՝

$$V_{\text{կր}} = \frac{(\sigma_{\text{ժ}})_{\text{մ}} - \sigma_{\text{մ}}}{(\sigma_{\text{ժ}})_{\text{բ}}\left[1-(1-\beta)\dfrac{\ell}{\ell_{\text{կր}}}\right] - \sigma_{\text{մ}}}: \qquad (15)$$

Կոմպոզիցիոն նյութերի ամրության վրա մետաղաթելի ℓ/d հարաբերության ազդեցությունը մանրամասն ուսումնասիրվել է 0,075 *մմ* տրամագիծ ունեցող պողպատյա (Ст.55) դիսկրետ մետաղաթելերով պղնձյա ամրանավորված կոմպոզիցիոն նյութերի միջոցով, որոնք ստացվել են բովախառնուրդի պատրաստման, սառը մամլման, 850…900⁰C ջերմաստիճանում ջրածնի միջավայրում եռակալման և =4 արտամղման գործակցով տաք արտամղման ճանապարհով: Բացահայտվել է, որ դիսկրետ և չկողմնորոշված մետաղաթելերով նյութերի ամրությունը միշտ ցածր է չկտրտված (անընդհատ) մետաղաթելերով կոմպոզիցիոն նյութերի ամրությունից, ընդ որում, ամենամեծ ամրությունը ստացվում է, երբ ℓ/d 100 (նկ. 3): Միաժամանակ, մետաղաթելի հաստատուն երկարության դեպքում մետաղաթելի բաղադրության մեծացումը հանգեցնում է կոմպոզիցիոն նյութերի ամրության մեծացմանը, ընդ որում, որքան փոքր է մետաղաթելի տրամագիծը, այնքան մեծ է կոմպոզիցիոն նյութի ամրությունը:

Ինչպես արդեն նշվեց, ամենամեծ ամրացումը ստացվում է, երբ մետաղաթելն ուղղված է լարման առանցքի ուղղությամբ: Եթե մետաղաթելն ուղղահայաց է բաշխված բեռնվածության ուղղությանը, ապա կոմպոզիցիոն նյութերի ամրությունը ստացվում է ամենափոքրը, իսկ 45° անկյան դեպքում ունենում է 75...80% արժեք՝ ամենամեծ ամրության համեմատ: Բեռնավորման ուղղությունից շեղված մետաղաթելը ենթարկվում է 3 տիպի քայքայման (նկ. 4):

θ անկյան ոչ շատ մեծ արժեքների դեպքում քայքայումը տեղի է ունենում մետաղաթելի կտրման ճանապարհով: Այս դեպքում կոմպոզիցիոն նյութի ամրությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_{\text{կ}} = \frac{\sigma_0}{\cos^2\theta}, \qquad (16)$$

որտեղ σ₀–ն կոմպոզիցիոն նյութի ամրությունն է θ=0 դեպքում, իսկ θ-ն՝ մետաղաթելի առանցքի և կիրառված լարման միջև կազմված անկյունը: Եթե θ-ի արժեքը փոքր է (նկ.4, կոր 1), ապա θ-ի մեծացումից ամրությունը կարող է մեծանալ: Սակայն փորձերը ցույց են տալիս, որ այդ անկյունները չեն գերազանցում մի քանի աստիճանը: θ միջին արժեքի դեպքում կոմպոզիցիոն նյութի քայքայումը կատարվում է մայրակի

այն հատույթներով, որոնք զուգահեռ են մետաղաթելերին կամ բաժանման մակերևույթին:



Նկ.3.Պղնձի հիմքով 0,075 մմ տրամագիծ ունեցող պողպատյա (Ст.55) թելերով ամրանավորված կոմպազիցիոն նյութի ամրության կախվածությունը մետաղաթելի ծավալային պարունակությունից և կողմնորոշվածությունից՝
1 - անընդհատ մետաղաթելերով ամրանավորված,2 - ընդհատվող և կողմնորոշված մետաղաթելերով ամրանավորված,3 - ազատ կողմնորոշված մետաղաթելերով ամրանավորված

Այդ դեպքում կոմպոզիցիոն նյութի ամրությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\sigma_{\text{կ}} = \frac{\tau'_{\text{մ}}}{\sin\theta\cos\theta}, \qquad (17)$$

որտեղ $\tau'_{\text{մ}}$–ը մայրակի ամրության սահմանն է սահքի դեֆորմացման ժամանակ: Մեծ անկյունների շեղումների դեպքում կոմպոզիցիոն նյութը քայքայվում է կամ մայրակի խզման ճանապարհով՝ մետաղաթելի մակերևույթին ուղղահայաց ուղղությամբ, կամ մակերևույթների բաժանման տեղամասում:Այդ դեպքում կոմպոզիցիոն նյութի ամրությունը կլինի՝

$$\sigma_{\text{կ}} = \frac{\sigma_{\text{ժմ}}}{\sin^2\theta}, \qquad (18)$$

որտեղ $\sigma_{\text{ժմ}}$–ը մայրակի ամրության սահմանն է ձգման ժամանակ: Գոյություն ունի կրիտիկական անկյուն՝

$$\theta_{\text{կր}} = arctg\frac{1{,}5\tau'_{\text{մ}}}{\tau_{\text{կ}}}, \qquad (19)$$

որից բարձրի դեպքում ամրությունը միանգամից իջնում է, ընդ որում, դա կատարվում է θ-ի մեծացմանը զուգընթաց:



Նկ.4. Կոմպոզիցիոն նյութի ամրության կախվածությունը մետաղաթելի կողմնորոշման անկյունից.

1 – կառուցված է (16) կախվածության հիման վրա,2 – կառուցված է (17) կախվածության հիման վրա,3 – կառուցված է (18) կախվածության հիման վրա

Այսպիսով, մետաղները դիսկրետ մետաղաթելերով ամրանավորելու դեպքում մետաղաթելի կողմնորոշվածությունը և կրիտիկական երկարությունն ունեն կարևոր նշանակություն կոմպոզիցիոն նյութի հատկությունների ձևավորման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Композиционные материалы волокнистого строения / Под ред. **И.Н. Францевича, Д.М. Карпиноса.**- Киев: Наукова думка, 1970.- 403 с.
2. **Карпинос Д.М., Тучинский Л.И., Вишняков Л.Р.** Новые композиционные материалы.- Киев: Вища школа, 1979. -312 с.
3. **Kelly A.** The strengthening of metals Ry Dispersed Partlcles // Proc. Roy. Soc.- 1964.
4. Современные композиционные материалы / Пер. с англ.; Под ред. **Л. Браутмана, Р. Крока.-** М.: Мир, 1970. - 672 с.
5. **Diet A.G.** Fiberglass Reinforced Plastics.- N.U., Reinhold Publ. Corp., 1954.

6. **Cottrell A.H.** Strong solids // Proc. Roy. Soc. - 1964.
7. Волокнистые композиционные материалы / Пер. с англ.; Под ред. **С.З. Бокштейна**.- М.: Мир, 1967.- 282 с.
8. **Kovacs W.J., london G.J.** Ssynthenis and materials characterzation of beryllium/ Ti-6Al-4V/ composites // Met. Trans.- 1977.- A8, №1.-P. 179-185.
9. **Карпинос Д.М., Тучинский Л.И.** Металлы, армированные волокнами (МАВ) // Порошковая металлургия.- 1968.-№7.-С. 37-48.

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ): Նյութըներկայացվելէխմբագրություն 11.04.2012:

С.Г. АГБАЛЯН, Г.А. ВАСИЛЯН, А.Р. САРГСЯН

ТЕОРЕТИЧЕСКИЕ И ТЕХНОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИПОЛУЧЕНИЯ АРМИРОВАННЫХ КОМПОЗИЦИОННЫХ МАТЕРИАЛОВ

На основании комплексных исследований выявлены теоретические и технологические особенности получения композиционных материалов, армированных металлическими волокнами, в том числе зависимость прочности растяжения композиционных материалов от объемной доли волокна, длины, ориентации в направлении оси и др. Показано, что при армировании металла с дискретными волокнами важное значение имеют ориентация волокна и критическая длина в процессе формирования свойств композиционных материалов.

Ключевые слова: композиционный материал, порошковая маталлургия, волокно, матрица, деформация, горячее выдавливание, растяжение, сжатие, анизотропия.

S.G. AGHBALYAN, G.A. VASILYAN, A.R. SARGSYAN

THEORETICAL AND TECHNOLOGICAL CHARACTERISTICS OF OBTAINING REINFORCED COMPOSITIONAL MATERIALS

Based on comprehensive research the theoretical and technological characteristics of obtaining composite materials reinforced with metal including tensile strength dependence of composite materials on the volume fraction of fiber length and orientation in the direction of the axis, etc fibers are substantiated. It is indicated that while reinforcing metal with discrete fibers, fiber orientation and the critical length in the formation of composite materials properties are of special importance.

Keywords:composite material, powder metallurgy, fiber, matrix, deformation, hot extrusion, tension, compression, anisotropy.

ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2012. Т. LXV, № 4.

ՀՏԴ 621.785.5 ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ն.Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՂՄԱՆ ԵՂԱՆԱԿԻՑ և ԶՈՂԱԿԱՐԻ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Փորձնական եղանակով որոշված են լարումների մեծությունները, որոնք առաջանում են բարձր հաճախականության հոսանքով և պաշտպանիչ գազային միջավայրում կարծր համաձուլվածքից և պողպատից զոդված նմուշներում:

Առանցքային նբառեր. կարծրհամաձուլվածք, պողպատ, բարձր հաճախականության հոսանք (ԲՀՀ), պաշտպանիչ գազային միջավայր, զոդում, զոդակար, լարումներ:

Մեքենաշինության մեջ և մետալուրգիայում կիրառում են պողպատներից և կարծրհամաձուլվածքներից պատրաստված մեծ թվով մեքենամասեր և գործիքներ: Արտադրության պայմաններում դրանց ամրացումն ընդունված է կատարել մեխանիկական ամրացումով, եռակցմամբ, զոդումով, սոսնձմամբ և այլ եղանակներով: Վերոնշյալ եղանակների թվում ուրույն տեղ ունի ԲՀՀ-վ զոդման տեխնոլոգիական գործընթացը, որն արտադրության մեջկիրառվում է պատասխանատու մեքենամասերի, կտրող և նորոգման գործիքների կարծր համաձուլվածքե թիթեղիկների և պողպատե իրանային մասերը միացնելու համար: Հաճախ զոդման ընթացքում առաջացող մեծ լարումների արդյունքում կարծր համաձուլվածքներում առաջանում են զոդակարի ամրությունը գերազանցող լարումներ, որոնք էլ առաջացնում են միկրո-և մակրոճաքեր և քայքայում [1,2]:

Աշխատանքի նպատակն է որոշել զոդման կարի լարումները ԲՀՀ-ի գեներատորներով և պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հրահոսային վառարաններում և զոդման ռեժիմների կարգավորման միջոցով նվազեցնել ներքին լարումները զոդված միացություններում:

Նախապես կատարված մի շարք հետազոտություններ հիմք են տվել ենթադրելու, որ զոդման կարում լարումները կարելի է փոփոխել զոդման կարի հաստության, ինչպես նաև զոդման ընթացքում տաքացման և սառեցման արագությունների փոփոխման միջոցով [2]:

Կարծր համաձուլվածքից (ВК8), պողպատից (պողպատ 45) նզոդանյութից (МО) բաղկացած հանգույցում յուրաքանչյուր բաղադրիչի ջերմային գծային ընդարձակման գործակիցը տարբերվում է մյուսբաղադրիչների արժեքներից: Վերոհիշյալ երեք բաղադրիչների զոդումից զոդման կարում առաջանում է բարդ լարվածային վիճակ՝ ներքին մեծ լարումներ ու դեֆորմացումներ:

Կարծր համաձուլվածքում և պողպատում զոդումից առաջացող լարումների մեծությունները և բաշխվածությունը որոշելու համար որոշում ենքկարծր համա-

ձուլվածքե մակերևույթում գոյացող կորացման շառավիղը: Կորացմանշառավիղ նընդունում ենք դրական, եթե կարծր համաձուլվածքե թիթեղիկը գտնվում է ուռուցիկության մասում: Լարումները, որոնք առաջանում են կարծր համաձուլվածքի և պողպատի տարբեր կծկումների ժամանակ, առաջացող սահքի լարումների և դեֆորմացումների հետևանքով զոդակարի միջոցով կարող են փոխանցվել մեկը մյուսին:

Նմուշի միջնամասում շոշափող լարումները զոդման կարի երկարությամբ պետք է հավասար լինեն 0-ի և դրանք առավելագույն արժեքն են ձեռք բերում եզրային մասերում: Այս եզրահանգումը հաստատվում է փորձի արդյունքների հիման վրա: Զոդանյութով անցնող շոշափող լարումներն առաջ են բերում սեղմում կարծր համաձուլվածքի ոչ կենտրոնական մասում:

Շոշափող ուժի մեծությունը (P_τ) նմուշի կորության շառավղի դրական արժեքի դեպքում, երբ պողպատի կծկման մեծությունը մեծ է կարծր համաձուլվածքի կծկումից, հավասար է՝

$$P_\tau = -b\int_a^l \tau(x)dx\,, \qquad (1)$$

որտեղ b- նկարծր համաձուլվածքե և պողպատե նմուշի լայնությունն է, τ- ն՝ շոշափող լարումը զոդանյութում, a-ն՝ նմուշի չափը միջնամասից մինչև ընտրված կտրվածքը, *l*- ը՝ նմուշի երկարության կեսը:

P_τ ուժը կարելի է փոխարինել մեծությամբ և ազդման ուղղությամ բիավասար, սակայն նմուշի կենտրոնական մասի վրա ազդող P_1 ուժին և M_1 մոմենտին:

$$M_1 = \left(-\frac{h_1}{2}\right)\left(-P_{\tau_1}\right) = \frac{bh_1}{2}\int_a^l \tau(x)dx_1\,, \qquad (2)$$

որտեղ h_1 -ը կարծր համաձուլվածքի նմուշի բարձրությունն է:

Կարծր համաձուլվածքում սեղմման σ_1 լարումը կարտահայտվի հետևյալ ձևով՝

$$\sigma_1 = -\frac{P_1}{bh_1} = -\frac{b}{b\cdot h_1}\int_a^l \tau(x)dx = \frac{-1}{h_1}\int_a^l \tau(x)dx: \qquad (3)$$

Նույն օրինաչափությամբ լարումները պողպատե նմուշի համար կստացվեն՝

$$P_{\tau_2} = b\int_a^l \tau(x)\cdot dx\,,\ \sigma_2 = \frac{1}{h_2}\int_a^l \tau(x)\cdot dx\,,\ M_2 = \frac{bh_2}{2}\int_a^l \tau(x)\cdot dx: \qquad (4)$$

«2» ինդեքսը բնորոշում է նույն մեծությունը պողպատ իհամար:

Զոդման լարումները որոշվել են հետևյալ ձևով. մետաղակերամիկական կարծր համաձուլվածքե թիթեղիկը՝ h = 3,2 *մմ* հաստությամբ, b = 12 *մմ*լ այնությամբ, l = 54 *մմ*

երկարությամբ, զոդել ենք նույնչափերով պողպատ 45-ից պատրաստված ձողիկիվրա (նկ.1ա): Կարծր համաձուլվածքե և պողպատե թիթեղիկների զոդումը կատարվել է ԲՀՀ-ով և պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանում:

Յուրաքանչյուր եղանակով կատարվել է 15 նմուշների զոդում: Ընտրվել են 4-ական նմուշներ՝ յուրաքանչյուր ձևից, և հետազոտվել են նմուշների զոդման կարերում առկա ներքին լարումները: Զոդումից հետո որոշել ենք զոդման ընթացքում առաջացող նմուշների ճկվածքը: Հաջորդ փուլում ֆրեզման հաստոցի վրա մշակել ու հեռացրել ենք պողպատյա իրանը և զոդանյութը, կրկին որոշել կարծր համաձուլվածքե թիթեղիկի մնացորդային ճկվածքը: Արդյունքում՝ որոշել ենք առաձգական ու մնացորդային դեֆորմացումները և հաշվարկված դեֆորմացումների արժեքների հիման վրա որոշել լարումները:



ա) բ)

Նկ.1. Նմուշների սխեման՝ ա) մինչև զոդումը, բ) զոդումից հետո

Զոդակարի լարումներըո որոշվել են [3] աշխատանքում բերված մեթոդիկայի և վերջնական արդյունքում տրված (5) - (8) բանաձևերի միջոցով.

$$\sigma_{1\text{ընդ}} = \frac{f_{\text{զոդ.}} - f_{\text{մնաց.}}}{l^2}\left[E_1 h_1 - \frac{E_1 h_1^3 + E_2 h_2^3}{3h_1\left(h_1 + h_2\right)}\right], \tag{5}$$

$$\sigma_{1\text{ընդ}}^{1} = -\frac{f_{\text{զոդ.}} - f_{\text{մնաց}}}{l^2}\left[E_1 h_1 + \frac{E_1 h_1^3 + E_2 h_2^3}{3h_1\left(h_1 + h_2\right)}\right], \tag{6}$$

$$\sigma_{2\text{ընդ}}^{1} = \frac{f_{\text{զոդ.}} - f_{\text{մնաց.}}}{l^2}\left[E_2 h_2 + \frac{E_1 h_1^3 + E_2 h_2^3}{3h_2\left(h_1 + h_2\right)}\right], \tag{7}$$

$$\sigma_{2\text{ընդ}} = -\frac{f_{\text{զոդ.}} - f_{\text{մնաց.}}}{l^2}\left[E_2 h_2 - \frac{E_1 h_1^3 + E_2 h_2^3}{3h_2\left(h_1 + h_2\right)}\right], \tag{8}$$

Որտեղ $\sigma_{1\text{ընդ}}$ - ը կարծր համաձուլվածքի արտաքին մակերևութի վրա եղած լարման մեծությունն է *(ՄՊա)*, $\sigma_{1\text{ընդ}}^{1}$ - ը՝ կարծր համաձուլվածքի զոդակարը շոշափող մակերևութի լարման մեծությունը *(ՄՊա)*, $\sigma_{2\text{ընդ}}$ - ը՝ պողպատի զոդակարը շոշափող

լարման մեծությունը *(ՄՊա)*, $\sigma^1_{2\text{ընդ}}$ - ը՝ պողպատի արտաքին մակերևութի լարման մեծությունը *(ՄՊա)*, $f_{\text{զոդում}}$ -ը՝ նմուշի զոդումից հետո ճկվածքը (*մմ*), $f_{\text{մնաց}}$ - ը՝ ճկվածքը պողպատի և զոդանյութի հեռացումից հետո *(մմ)*, $2l$ -ը՝ նմուշի երկարությունը *(մմ)*, h_1 և h_2 -ը՝ զոդվող կարծր համաձուլվածքե և պողպատե թիթեղիկի հաստությունը *(մմ)*, $h_1 + h_2$ =6,4 *մմ*, E_1 -ը՝ Յունգի մոդուլը կարծր համաձուլվածքի համար, $E_1=5{,}48\cdot10^5$ *ՄՊա*, E_2 -ը՝ Յունգի մոդուլը պողպատի համար, $E_2=2{,}01\cdot10^5$ *ՄՊա*: Զոդումից ստացված զոդման կարի հաստության չափերը բերված է նաղ. 1-ում:

Աղյուսակ 1

Զոդմանկարիհաստությանչափերըտարբերեղանակներովզոդվածնմուշներում

№	Զոդման եղանակը	Նյութը	Զոդման կարի հաստությունը, Z մմ			
1	Բարձր հաճախականության հոսանքի գեներատոր (ԲՀՀ)	Կարծր համաձուլվածք (ВК8), զոդանյութ (МО), պողպատ 45	0,14	0,17	0,19	0,24
2	Պաշտպանիչ գազային միջավայր ունեցող վառարան	Կարծր համաձուլվածք (ВК8), զոդանյութ (МО), պողպատ 45	0,14	0,19	0,20	0,22

ԲՀՀ-ով զոդման ընթացքում օգտագործվել է օքսիդալուծիչ, իսկ պաշտպանիչ գազային միջավայրը բաղկացած է եղել էնդոգազից $(CO + H_2 + N_2)$, որն էլ ծառայել է որպես միջոց նմուշների մակերևութային մասերից օքսիդային շերտը հեռացնելու համար: Զոդումը կատարվել է պղնձե զոդանյութով (МО) - մակնիշի, պղինձ - 99,0 %): Տաքացման ջերմաստիճանը կազմել է 1083+(30…50°C)≈1120°C:

ԲՀՀ-ով զոդումըկ ատարվել է 33…35°C տաքացման արագությամբ, և սառեցումն իրականացվել է օդում: Զոդման ընթացքում տեղի է ունեցել զոդված նմուշի ճկվածք: Ճկվածքը որոշվել է հարմարանքի միջոցով, որը լիսեռատիպ ձող է, որի մշակված մակերևույթի վրա տեղակայված և ամրացված է զոդված նմուշը, իսկ լիսեռատիպ շինածոն տեղակայվում է խառատային հաստոցի վրա, մի կողմն ամրացվում է կապիչում, իսկ մյուս մասը հենվում է հետևում թամբի վրա տեղակայված կենտրոնի վրա: Ճկվածքի մեծությունը որոշվել է ինդիկատորի միջոցով, որի բաժանարար մեկ գիծը կազմում է 2,0 *մկմ*: Ինդիկատորը պատյանով ամրացվում է խառատային հաստոցի կտրիչակալի վրա, ինդիկատորը մոտեցվում և հենվում է զոդված նմուշին, տրվում է որոշակի չափով ձգվածություն (3…5) *մմ*, և կտրիչակալը հորիզոնական ուղղությամբ տեղաշարժելով՝ որոշում ենք ճկվածք իճիշտ չափը: Փորձարկումներից պարզվել է, որ ԲՀՀ-ով ստացված նմուշի ճկվածքը կազմել է՝ $f_{\text{զոդում}}$ = 0,385 *մմ՝* զոդման կարի 0,14 *մմ* հաստության դեպքում: Չափումից հետո նմուշի վրայից հանվել

են պողպատյա մասը և զոդակարը: Մշակումը կատարվել է ֆրեզային՝ 675 մակնիշի հաստոցի վրա՝ ճակատային ֆրեզով, հովացման հեղուկի առկայությամբ: Զոդված նմուշն ամրացվել է եռադիրք մամլակի մեջ՝ ամրացված ֆրեզային հաստոցի սեղանի վրա: Ֆրեզային հաստոցի վրա մշակելուց հետո դարձյալ նույն մեթոդով որոշվել է կարծր համաձուլվածքե նմուշի ճկվածքը՝ այս անգամ առանց պողպատե թիթեղիկի և զոդանյութի: Մեխանիկական մշակման ընթացքում կարծր համաձուլվածքե թիթեղիկի ճկվածքի մեծությունը կազմել է $f_{\text{մնաց}}$ = 0,153 *մմ*, զոդմանկարի 0,14 *մմ* հաստության դեպքում: Տարբեր հաստության զոդման կարերի դեպքում զոդումիցև զոդման կարից մետաղական մասը հեռացնելուց հետո առաջացող ճկվածքների արժեքները բերված են աղ. 2-ում:

Աղյուսակ 2

Երկու եղանակով զոդված նմուշների, տարբեր զոդման կարերի հաստությունների դեպքում, զոդումից և մետաղական մասը հեռացնելուց հետո առաջացած ճկվածքների արժեքները

Զոդման եղանակը	Զոդվող նյութը	Զոդման կարի հաստությունը (Z), *մմ*	Ճկվածքը, $f_{\text{զոդում}}$ զոդումից հետո, *մմ*	Մնացորդային ճկվածքը, $f_{\text{մնաց}}$ մետաղի հեռացումից հետո, *մմ*
Բարձր հաճախականության հոսանքի գեներատոր (ԲՀՀ)	Կարծր համաձուլվածք (ВК8), զոդանյութ (МО), պողպատ 45	0,14	0,385	0,153
		0,18	0,36	0,14
		0,20	0,34	0,136
		0,25	0,31	0,124
Պաշտպանիչ գազային միջավայր ունեցող վառարան	Կարծր համաձուլվածք (ВК8), զոդանյութ (МО), պողպատ 45	0,14	0,196	0,07
		0,18	0,186	0,06
		0,20	0,18	0,06
		0,25	0,17	0,05

Ունենալով զոդումից և մեխանիկական մշակումից հետո ճկվածքի մեծությունները $(f_{\text{զոդում}}, f_{\text{մնացորդ}})$, օգտվելով (5)-(8) բանաձևերից, որոշել ենք զոդման ընթացքում նմուշի լարման մեծությունը՝ զոդման կարի 0,13 *մմ* հաստության դեպքում:

ԲՀՀ-ի գեներատորների միջոցով զոդված նմուշի հաշվարկված լարումների բաշխվածությունը ցույց է տրված նկ. 2 ա-ում:

Գիտափորձնական հետազոտությունները ցույց են տվել, որ լարումների մեծությունների վրա էական ազդեցություն ունեն մշակման ռեժիմները, որոնց մեջ կարևոր է սառեցման արագությունը: Զոդման ընթացքում որքան նվազում է սառեցման արագությունը, այնքան լարումները ստացվում են փոքր:

Ելնելով վերոհիշյալ նկատառումից, նմուշների զոդումը կատարվել էպաշտպանիչ գազային միջավայր $(CO + H_2 + N_2)$ ունեցող հարահոսային վառարանում, որտեղ չկա օքսիդացման վտանգ, և ստացվում է բարձրորակ զոդման կար, իսկ տաքացման ու սառեցման արագությունները կարելի է կարգավորել, այսինքն՝ սառեցումը կատարել ենք դանդաղ կերպով և դրանով իսկ նվազեցրել լարումները զոդվող փորձանմուշներում:



ա) բ)

Նկ. 2. Լարումների բաշխվածությունը՝ ա) ԲՀՀ-ովզոդված նմուշում, բ) *զոդված պաշտպանիչ գազային միջավայր* $(CO + H_2 + N_2)$ *ունեցող հարահոսային վառարանում*

Պաշտպանիչ գազայինմ իջավայրում զոդման ռեժիմները կազմել են՝ $V_{տաք} = 1,3...1,5$ *աստ/վրկ*, $V_{սառ} = 0,4...0,5$ *աստ/վրկ*, $T = 1120^{o}C$, բարձր ջերմաստիճանում պահման տևողությունը՝ 12-ից 13 *րոպե*: Նման զոդման ընթացքումս տացվել է հավասարաչափ բաշխվածության զոդակար՝ առանց խոռոչների և այլ թերությունների:

Ինչպես ԲՀՀ-ի դեպքում, այնպես էլ պաշտպանիչ գազային միջավայրում զոդված նմուշների համար նույն մեթոդով որոշվել է ճկվածքը նախնական զոդված նմուշում և պողպատե ու զոդանյութի հեռացումից հետո՝ առանձին կարծր համաձուլվածում:

Ստացվել են հետևյալ ցուցանիշները՝ $f_{զոդում} = 0,24$ *մմ*, $f_{մնացորդը} = 0,1$ *մմ*:

Փորձարկվող նմուշների ճկվածքների արժեքների նվազումը թույլ է տալիս ենթադրել, որ լարումները երկրորդ եղանակով զոդված նմուշներում անհամեմատ ավելի փոքր են, քան ԲՀՀ-ի դեպքում (նկ.2 բ):

ԲՀՀ-ով և պաշտպանիչ գազային միջավայրում զոդված նմուշների լարումների արժեքները բերված են աղ. 3-ում, որտեղից պարզորոշ երևում է, որ զոդված նմուշների լարումների վրա էական ազդեցություն ունեն այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են զոդման եղանակը, ռեժիմները և զոդման կարի հաստությունը:

Աղյուսակ 3

Տարբեր եղանակներով զոդված նմուշների լարումների արժեքները զոդման կարերի տարբեր հաստությունների դեպքում

	Տաքացման ձևը	Զոդակարի հաստությունը, *մմ*	$\sigma_{1\text{ընդ}}$, *Մպա*	$\sigma^{1}_{1\text{ընդ}}$, *Մպա*	$\sigma_{2\text{ընդ}}$, *Մպա*	$\sigma^{1}_{2\text{ընդ}}$, *Մպա*
1	Բարձր հաճախականության հոսանքի գեներատոր (ԲՀՀ)	0,14	430	- 685	31,9	-77
2		0,18	395	- 630	305	-70,7
3		0,20	390	- 622	301	-70
4		0,25	360	- 576	279	-64,7
1	Պաշտպանիչ գազային միջավայր ունեցող վառարան	0,14	260	-413	200	-46,7
2		0,18	240	-382	185	-42,9
3		0,21	230	- 368	178	-41,3
4		0,24	220	-352-	170	-39,4

Համաձայն կատարված գիտափորձնական հետազոտությունների, լարումների մեծությունները կախված են նաև մի շարք այլ գործոններից, այդ թվում՝ պողպատի մակնիշից, զոդանյութից, կարծր համաձուլվածքի բաղադրության մեջ մտնողբա – ղադրիչներից և քանակությունից:

Արտադրության պայմաններում կիրառում են կարծր համաձուլվածքե թիթեղիկներով զոդված էլեմենտներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել որոշելու նաև զոդված նմուշների ամրության սահմանը: Ամրությանսահմանըորոշելուհամարպտրաստվելենփորձանմուշներ, որոնք և հետազոտվել են ձգմանտակ (նկ. 3):



Նկ. 3. Զոդմանկարիամրությանսահմանիորոշմանսխեմա

Փորձարկման արդյունքներից պարզվել է, որ զոդման կարի ամրության վրա զգալիազդեցություն ունի զոդման եղանակը: Ի տարբերություն զոդման ԲՀՀ-ի եղանակի, պաշտպանիչ գազային միջավայր ունեցող հարահոսային վառարանի դեպքում, որտեղ տեղի է ունենում զոդվող նմուշների դանդաղտաքացում և սառեցում, ստացվում են բարձր որակի զոդման կարեր՝ առանց թերությունների (աղ. 4):

Աղյուսակ 4

Կարծր համաձուլվածքից և պողպատից զոդված նմուշների ամրության սահմանը զոդման տարբեր եղանակների դեպքում

Զոդումը ԲՀՀ-ով				Զոդումը վառարանում			
Զոդվող նմուշների նյութը	Բեռնվածքը, P, 10^{-5}, Ն/մ²	Կոնտակտային մակերեսը, S, մմ²	Ամրությունը ըստ ձգման, $\sigma_{ամր}$, ՄՊա	Զոդվող նմուշների նյութը	Բեռնվածքը, P, 10^{-5}, Ն/մ²	Կոնտակտային մակերեսը, S, մմ²	Ամրությունը ըստ ձգման, $\sigma_{ամր}$, ՄՊա
Կարծր համաձուլվածք(ВК8), զոդանյութ(МО), պողպատ 45	937 1006 975 956 975 987 925	125	750 805 780 765 780 790 740	Կարծր համաձուլվածք, (ВК8), զոդանյութ (МО), պողպատ 45	1310 1320 1300 1330 1340 1290 1320	125	1050 1055 1040 1065 1070 1030 1055

Կարծր համաձուլվածքե թիթեղիկներով պողպատյա դանակների զոդման ընթացքում լարումների նվազեցման համար կարելի է հաշվի առնել միշարք նկատառումներ, որոնցից են.

- Կարծր համաձուլվածքե և պողպատե թիթեղիկների մակնիշների ճիշտ ընտրությունը, այսինքն՝ երկու բաղադրիչները պետք է հնարավորության սահմաններում ունենան ջերմային գծային ընդարձակման մոտիկ ցուցանիշներ:
- Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել զոդվող նմուշի տաքացման և սառեցման արագությանը: Նպատակահարմար է զոդման ընթացքում զոդակարի սառեցման արագությունը փոքրացնել, անհրաժեշտության դեպքում օգտագործելով լրացուցիչ հատուկ սարքավորումներ:
- Զոդման ընթացքում ընտրել տաքացման լավագույն ձևը, որը հնարավորություն կտա ամբողջ զոդակարի երկարությամբ հավասարաչափ տաքացնել կարծր համաձուլվածքե և պողպատե թիթեղները, ապահովել զոդանյութի որակյալ թրջելիություն, ստանալ որակյալ զոդման կար՝ առանց խոռոչների, «օդային պարկերի» և այլ թերությունների:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

1. **Овсепян Г.С. Галоян А.Г.** Исследование напряженного состояния металлокерамических твердых сплавов //Проблемы динамики взаимодействия деформируемых сред: Международная конференция. – Горис, 2005. - С. 261-265.
2. **Հովսեփյան Գ.Ս.** Գործիքանյութեր: Գործիքների մաշակայունության բարձրացումը. - Եր.: Հայպետհրատ, 1985. - 83 էջ:
3. **Арцимович В.Н., Патрикеева Э.М., Токарев И.А.**Экспериментальный метод определения внутренних напряжений, возникающих при пайке разнородных материалов: Материалы конференции/ Московский дом научно–технической пропаганды им Ф.Э. Дзержинского.-М., 1962. - С. 115-119.

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ): Նյութը ներկայացվել է խմբագրություն 12.04.2012:

Н. Г. ОВСЕПЯН

ЗАВИСИМОСТЬ НАПРЯЖЕНИЙ ОТ СПОСОБА ПАЙКИ И ТОЛЩИНЫ ПАЯНОГО ШВА

Экспериментальным путем определены величины напряжений, образующихся при пайке образца твердого сплава и стали на установкеТВЧ и в защитной газовой среде.

Ключевые слова: твердый сплав, сталь, высокочастотный ток, защитная газовая среда, пайка, паяный шов, напряжение.

N.G. HOVSEPYAN

THE DEPENDENCE OF THE VOLTAGE VALUES ON SOLDERING AND THICKNESS OF SOLDERED SEAM

The value of the voltage formed during alloy brazing and a sample of solid steel is experimentally determined on the HD and protective gas environment.

Keywords.solid alloy, steel, high-frequency current, protective gas environment, soldering, soldered seam,voltage.

ISSN 0002-306X. Изв. НАН РА и ГИУА. Сер. ТН. 2012. Т. LXV, № 4.

УДК 661.685 **МЕТАЛЛУРГИЯ**

С.С. ОРДАНЬЯН, С.В. ВИХМАН, Д.Д. НЕСМЕЛОВ, А.О. ОВСЕПЯН

ВЗАИМОДЕЙСТВИЕ В СИСТЕМЕ SiC-YB_6

Исследовано строение разреза SiC- YB_6. Показано, что разрез SiC-YB_6 описывается диаграммой состояния эвтектического типа с $T_{эвт}$= 2200 ±30 ^oC и составом эвтектики 78...80% *мол*SiCи 22...22% *мол*YB_6.

Ключевые слова:карбид кремния, гексаборид иттрия, эвтектика, политермический разрез.

Карбид кремния является основой для создания различных по назначению керамик. Ему присущ комплекс важных эксплуатационных свойств (твердость, малый коэффициент линейного термического расширения, высокая теплопроводность и др.), отражающих специфику электронного строения, его преимущественноковалентную межатомную связь. Гексабориды редкоземельных металлов (РЗМ) характеризуются сложным электронным строением, сочетающим ковалентную межатомную связь с электронной проводимостью, предопределяющим высокие температуру плавления, твердость, термоэмиссионную активность.

Ранее нами была изучена система SiC-LaB_6 [1], которая при температурах ниже $T_{разл}$SiC (2760°C) описывается как квазибинарная эвтектическая. В изучаемой системе SiC-YB_6 оба компонента плавятся по перитектической реакции (2760 и 2770°C соответственно). Представляет интерес информация о взаимодействии между выбранными тугоплавкими соединениями указанных ниже температур, что важно для оценки возможности создания специальных композиционных материалов на их основе. Исходный порошок YB_6 марки “Ч” производства Донецкого завода химреактивов подвергался виброизмельчению до размера частиц d=5…8 *мкм* шарами из TiB_2, а порошокα-SiC применяли дисперсностью 8…12 *мкм*. Рентгенографически определяли постоянные кристаллической решетки обеих фаз (см. табл.), которые были сопоставленысо справочными данными.

По методике [2] из порошков SiC и YB_6 были подготовлены смеси (см. табл.) и образцы для определения $T_{пл}$ при нагреве прямым пропусканием тока через спеченный образец или при косвенном нагреве от графитового трубчатого нагревателя. В центре спеченного при 1800°C в аргоне образца (или графитового нагревателя) электроэрозионным способом “прожигалось” отверстие, имитирующее “черное тело”,по свечению которого микропирометром ЛМП-014 оценивали температуру. В случае нагрева прямым пропусканием тока при определенном соотношении в нагретом образце Ж:Тпроисходил “разрыв” образца и фиксировалась $T_{разр}$, в случае косвенного разрыва фиксировалась температура, при которой на подвешенном образце формировалась капля расплава, которую принимали за температуру ликвидуса.

Таблица

Температуры плавления и свойства плавленых образцов системы SiC- YB_6

Содерж. SiC, *мол %*	Температура разрыва образца, $T_{разр}$, °C	Температура ликвидуса, $T_{лик}$, °C	Микротвердость фазовых составляющих, H_v, *ГПа*	Параметры элементарной ячейки	Кол-во фаз
91	2300	2400	SiC 29,5	a=0,308, c=1,5091	2
86	2270	2330			2
81	2230	2270			2
79	2200	2200	эвт. 25,8	YB_6 a=0,4103 SiC a=0,308, c=1,5091	2
71	2220	2240			2
62	2240	2270			2
48	2260	2330			2
39	2270	2350			2
31	2290	2380	YB_6 26,0	a=0,4103	2

После термообработки в образцах изучали металлографически структуру, рентгенографически оценивали фазовый состав и параметры элементарной ячейки фаз, определяли микротвердость фазовых составляющих. При анализе концентрационной зависимости $T_{пл}$ ($T_{разр}$ и $T_{лик}$) установлено наличие минимума и практическое равенство значений $T_{разр}$ и $T_{лик}$ в точке минимума, что характерно для систем, в которых реализуется эвтектика. Металлографический анализ расплавленного образца подтвердил эвтектический характер рассматриваемой системы (рис.1) – температура плавления эвтектического состава оценивается $T_{эвт}$=2200±30°C.



Рис. 1. Политермический разрез системы SiC – YB_6

В эвтектике содержится 78…80% *мол*SiC и 20...22% *мол*YB_6. Рентгенографически в образцах также подтверждается практическое отсутствие взаимной растворимости компонентов в твердом состоянии как после плавления, так и после выдержки при эвтектической температуре 2200°С в течение 30 *мин*. Практически для всех эвтектических сплавов в системах с участием тугоплавких соединений, включая изучаемую системуSiC-YB_6, установлен эффект снижения твердости эвтектик в сравнении с твердостью индивидуальных компонентов при неизменной твердости фазовых составляющих. В этой системе также проявляется изменение механизма деформационных процессов – переноса из объема частиц на межфазные границы, где в процессе совместной кристаллизации двух твердых фаз (YB_6 и SiC) формируются специальные межфазные границы, стимулирующие процесс взаимного "проскальзывания" зёрен YB_6 и SiC при идентировании (рис.2).



Рис.2. Структура закристаллизованногосплава в системе SiC-YB_6

Установленная эвтектическая температура и состав эвтектики позволяют рационально выбрать режим термообработки разрабатываемой керамики с планируемым комплексом свойств.

Выводы. Взаимодействие в системе SiC-YB_6 ниже температуры разложения этих компонентов описывается эвтектической диаграммой состояния с $T_{эвт}$=2200±30°С и составом эвтектики 78…80% *мол*SiC и20…22% *мол*YB_6.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. **Орданьян С.С, Юрченко О.В., Вихман С.В.** Взаимодействие в системе SiC- LaB_6 // Неорганические материалы. – 2004. - Т. 40, №6. - С. 1-4.
2. **Орданьян С.С., Августиник А.И., Вигдергауз В.С.** Диаграмма состояния ZrC-Mo // Исследования в области химии силикатов и окислов: Сб. – М.-Л.: Наука, 1965.-С. 220-228.

Санкт-Петербургский государственный технологический институт (Технический университет); Институт общей и неорганической химии им. М. Г. Манвеляна НАНРА. Материал поступил в редакцию 15.02.2012.

Ս.Ս. ՕՐԴԱՆՅԱՆ, Ս.Վ. ՎԻԽՄԱՆ, Դ.Դ. ՆԵՍՄԵԼՈՎ, Ա.Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ SiC-YB_6 ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ուսումնասիրվել է SiC- YB_6 կտրվածքի կառուցվածքը: Ցույց է տրված, որ SiC- YB_6 կտրվածքը բնութագրվում է էվտեկտիկական տիպի վիճակի դիագրամով, երբ $T_{էվտ}$=2200±30 ^oC, և առկա էվտեկտիկայի 78...80% *մոլ* SiC և 22...22% *մոլ* YB_6 բաղադրությունը:

